Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

9

ԻՍԿ հիմա մայիս է ու ձնհալ: Սևահողի շերտերն ավելի լայնանում են ու տարածվում, ձյունը, ձյան շերտերը բարակում են, փոքրանում, անհետանում: Կեսօրին կարելի է զգալ արևի վերապահ, բարակ ջերմությունը, ջերմանում են մարդկանց սրտերը, գարնան բուրմունքով թրթռում է օդը, օրը:

Կիրակի է: Մենք նստել ենք Աշոտ դայու հետ համար 7 բարաքի առաջ, հողի վրա հաստատված նստարանին և խոսում ենք ամենահնարավոր և անհնարին բաների մասին: Ուղղիչ-աշխատանքային ճամբարի բնակիչները դուրս են թափվել բարաքներից և վայելում են մայիսյան դեռ թույլ արևի ժլատ գուրգուրանքը: Ոմանք երկու-երեք հոգով, շատերն առանձին-առանձին շրջում են ճամբարը կիսող մեծ ճանապարհի վրա ետ ու առաջ: Լսվում է Գրիմբերգի բարձրաձայն ծիծաղը: Աշոտ դային նայում է նրա կողմը և գլուխը տարուբերում . չի սիրում նրան, այդ Գրիմբերգին Աշոտ դային: Երիտասարդ է նա, միշտ մաքուր սափրված, բակենբարդներով, չապլինյան բեղերով, ծխամորճը ատամների արանքում, բոլորի հետ դու-ով, բոլորի հետ սիրալիր, որը սակայն զբաղվում է սպեկուլյացիայով, խաբում է, առնում, խաբում է, ծախում, ժպտում է, խաբում, ցավակցում է, խաբում է, խաբում է, խաբում . . .

— Նրան կարելի՞ է ուղղել, — հարցնում եմ ես:

— Ո՞ւմ, — հարցնում է Աշոտ դային, իսկ ես գիտեմ, որ նա շատ լավ գիտե, թե ո՞ւմ մասին եմ հարցնում ես . նա պարզապես ուզում է ժամանակ շահել

մտածելու համար:

Ես լռում եմ: Մի քանի րոպեից հետո Աշոտ դային պատասխանում է:

— Կուզիկին գերեզմանն էլ չի ուղղի . . .

Մոտենում է Մամոն . տխուր Մամոն:

— Դայի, — ասում է նա, — Սանոն ձեռքից գնում է:

Աշոտ դային հառաչում է . այդպես նա հառաչում է, երբ մի ծանր բան է հիշում:

— Որտե՞ղ է նա:

— Հիվանդանոցի ետևը:

— Ի՞նչ է անում:

— Հեչ, նստել, նայում է պատուհանին:

Պատուհանին . . . Ես գիտեմ, թե ո՞ր պատուհանին, ի՞նչ պատուհանի մասին է խոսքը:

. . . ԱՅՈ, Սանոն դարձավ մեր գանձապահը, պահեստապետը, տնտեսվարը այն օրից, երբ այդ մասին խոսեց Աշոտ դային, մեղանչելով ճշմարտության դեմ: Չէր, բայց դարձավ: Եվ ճիշտ դուրս եկավ Աշոտ դային — ոչ մի գեղծում, ոչ մի յուրացում:

Իսկ ամեն օր բրուտանոց էր մտնում նա՝, լավ տրամադրությամբ, բրուտանոցը լցնելով իր ջերմ, կանացի շնչով . նա կատակում էր բոլորիս հետ և առանձին-առանձին, հետո մի երկու րոպեով առանձին խոսում էր Սանոյի հետ . ցուցամատով խփում էր նրա ծնոտին ու գնում երգելով .

Խաղողի երկիր, մրգերի երկիր,

Սիրուն Մոլդավիա . . .

— Ուզում եմ մի օր ընկնել ձեր բարաքը, — ասաց նա մի օր — ուզում եմ տեսնեմ ինչպես եք ապրում:

Շուտով նա իրագործեց իր սպառնալիքը: Այդ այն օրերին, երբ «գործարար բակի» պատվո տախտակի վրա Աշոտ դայու անունից հետո երևաց Սանոյի անունը . — «Սանասար Մելքումյան»:

. . . ԵՐԲ նա ներս մտավ, թվաց, որ գարնանային շնչով լցվեց բարաքը: Այդ օրն էլ կիրակի էր: Բարաքի բնակիչներն զբաղված էին իրենց առօրյա մանր-մունր գործերով: Նրանք իրար անցան և ժպտացին ներողամիտ ժպիտով: Կոլոկոլնիկովը կարող էր, իհարկե, նրան անմիջապես հեռացնել բարաքից, որովհետև այդ էր պահանջում ճամբարային կարգը . — կանայք իրավունք չունեն երևալու տղամարդկանց բարաքներում, տղամարդիկ իրավունք չունեն մտնել կանանց բարաքը, — այսպես էր կարգը: Կոլոկոլնիկովը փակել էր իր խուցը, Նուրանբաևը նայեց չսպասված հյուրին և շուռ եկավ, — ես տեղեկություն չունեմ, ես զբաղված եմ իմ վառարանով: «Գործարար բակի» պահեստապետ Ֆրենկելը ժպտաց ականջից ականջ, երբ տեսավ նրան, փորձեց անգամ մի բան ասել, բայց չհասցրեց:

— Ահա, թե որտե՞ղ են թառել իմ բազեները, — ասաց նա ուրախ ձայնով, մեզ տեսնելով: — Եկա ճաշ ստացողների հետ, որպես ճաշի մատակարար, ճաշ բաժանող . . . Ես՝ ճաշ բաժանող ու ահա թռա ձեզ մոտ .

Թռավ բազեն վեր, վեր,
Իջավ բազեն վար, վար,
Վիրավոր էր բազեն . . .

Ու ժպտաց իր ժպիտով:

Այդ միջոցին դրսից ներս ընկավ Մամոն ու շնչակտուր մոտեցավ .

— Դայի, նաչալնիկը . . .

Սանոն վեր թռավ տախտակամածից, Աշոտ դային ուզեց մի բան ասել, բայց այդ րոպեին հնչեց դռան մոտ կանգնածներից մեկի ազդարարությունը .

— Внимание!

Ներս մտան ճամբարի պետը, գլխավոր բժիշկը, բուժակ Եոսիֆ Մերպերտը և կոմենդանտը:

— Վառարանի ետև՛, վառարանի ետև՛, — շշնջացին մի քանի հոգի:

Բայց նա տեղից չշարժվեց:

Մի քանի հոգի փորձեցին ծածկել նրան, բայց ուշ էր:

Իր խցից դուրս թռավ Կոլոկոլնիկովը, ընդառաջեց շքաղմբին և զեկուցեց քնից նոր զարթնած մարդու խռպոտ ձայնով .

— Համար 7 բարաքի ավագ Միտրոֆան Միտրաֆոնովիչ Կոլոկոլնիկով . բարաքում կարգի խախտման ոչ մի դեպք չի եղել:

Պետը առանց նայելու նրա վրա, անցնում է առաջ և մոտենում է Լյալյային:

— Դու կարող էիր գոնե թաքնվել, — ասում է հանդարտ ձայնով, խախտելով լարված լռությունը:

— Հաշվեք, որ ինձ չեք տեսել, քաղաքացի պետ, — պատասխանում է նա կես խնդրող, կես առաջարկող ձայնով:

— Հիմք չկա: Անպատիժ թողնել չեմ կարող: — Նա դառնում է կոմենդանտին . — մեկուսարա՛ն . . . ավագին հանել:

. . . Իսկ մեկուսարանը ճամբարի բանտն է . այնտեղ նստում են երեքից մինչև տասնհինգ օր՝ կարգապահության խախտողներն, ինչպես և նրանք, որոնց ջերմությունը 38-ից վար է և հրաժարվում են աշխատանքից: Այնտեղ նրանք ստանում են 300 գրամ հաց և եռացրած ջուր: Նա դատապարտվեց երեք օրվա մեկուսացման, սակայն չկարողացավ լրիվ տանել պատիժը . երրորդ օրը նա հիվանդացավ թոքերի ծանր բորբոքումով և տեղափոխվեց հիվանդանոց, կանանց բաժին: Մենք, բրուտանոցի անձնուրաց ասպետներս, չլքեցինք նրան: Կոմենդանտի օգնական Անջաբաձեն անձամբ հասցնում էր աղետյալին մեր օգնությունը . օգնում էին նրան անգամ մարդիկ, որոնք անձամբ ծանոթ չէին նրա հետ . այդ նա էր, միշտ առույգ, միշտ ժպտուն, բոլորին սիրելի էակ, որն ստեղծված էր սիրո, ազատ արևի համար, ծաղիկների ու երգի համար:

. . . Մոայլվեց բրուտանոցը, այլևս ներս չի մտնում նա, չի խոսում, չի կատակում, չի զնգում նրա արծաթ ծիծաղը բրուտանոցում: Տխուր է և Աշոտ դային, Մամոն թաղծում է, իսկ Սանոն . . .

Ճիշտ է, նրա անունը չիջավ պատվո տախտակից, ճիշտ է, նա չդադարեց մեր անբասիր տնտեսվարը լինելուց, բայց դժվար չէր նկատել, որ նա իր ամբողջ էությամբ ցնցված էր իրադարձություններից: Ամեն անգամ, երբ աշխատանքից ճամբար ենք վերադառնում, նա՛ է բարաք վերադառնալուց առաջ վազում հիվանդանոց, իմանալու հիվանդության ընթացքի մասին, պատուհանի մթագնած կրկնափեղկերից նա է աշխատում տեսնել գոնե նրա գլուխը բարձերի վրա, նա՛ է այնքուն գիշերներ անցկացնում, նա՛ է օր-օրին փոքրանում, կծկվում, հալվում . . .

Մի անգամ նա հարցրեց .

— Դժոխք, դրախտ կա՞:

— Դժողքն էլ, դրախտն էլ երկրի վրա է, — պատասխանեց Աշոտ դային:

Նա ավելի մոայլվեց: Անիվն ավելի արագ պտտվեց:

. . . Չէ, չի հնչի այլևս նրա ձայնը, երբ անցնում են բրիգադները հրշեջ աշտարակի կողքով:

— Քեռի, ա՛յ քեռի, մի նայի, ամնիստիան չի՞ երևում . . .

Աշտարակի վրա կանգնած հերթապահ պահակն էլ պետք է որ զարմացած լինի . — ո՞ւր կորավ այդ աղջիկը, ինչո՞ւ չի լսվում նրա ամենօրյա չարաճճի հարցը, չլինի՞, իսկապես, «ամնիստիան» եկել, տարել է նրան, իսկ ինքը, կանգնած բարձր աշտարակի գլխին, ոչինչ չի նկատել . . .

Լուսաբացին մահացավ նա:

Երեկոյան դեռ Սանոն մի կերպ օգտվելով հերթապահ սանիտարի բարեհոգությունից, ընկել է նրա մոտ: Արտասվել է նա և խնդրել .

— Հիշիր ինձ և մի՛ գնա վատ ճանապարհով: Թե չէ ես այն աշխարհում շատ կբարկանամ ու լաց կլինեմ: Ինձ չլացացնես, Սանյա, ի՛մ բազե . . .

Գործարանի բանվորական ակումբի նախաձեռնությամբ կազմակերպված գրական երեկոն վերջացավ: Դահլիճը թնդում է ծափահարություններից: Հանդիսականները դուրս են հորդում: Դուրս ենք գալիս և մենք:

Դռների մոտ ինձ սպասում է գործարանի ցեխի վարիչ ընկեր Սանասար Մելքումյանը:

— Գնանք:

Գարնանային խորունկ գիշեր: Դիմացի բազմահարկ շենքի ծխնելույզներից մեկի վրա թառել է լուսինը: Կարծես նա ծխնելույզից է դուրս եկել մի որպեսով օդ շնչելու և ուր որ է նորից պիտի մտնի ծխնելույզը:

— Աշոտ դայի՞ն, — նորից հարցնում է Սանասարը:

— Թոշակի է անցել: Դիլիջանումն է:

Մենք բարձրանում ենք նորակառույց շենքի երկրորդ հարկը: Սանասարը սեղմում է զանգի կոճակը:

Ընդառաջ են վազում երկու թխորակ փոքրիկներ, տղա և աղջիկ:

— Լյալյա, — նա ցույց է տալիս աղջկան, — Աշոտիկ, — ցույց է տալիս տղային: Թուխ-թխամազ կինը ժպտում է: Դիմացի պատից նայում է Լյալյայի մեծացրած յուղաներկ նկարը: Լուսանկարվել էր Սարանսկում . նայում էր ասես կենդանի, վառ Լյալյան և որ կողմից նայես, նայում է նա քեզ, ուղիղ քո աչքերին: Շրթունքները կիսաբաց են, ժպտում են մարգարտաշար, ճերմակ ատամները . նա կարծես ուզում է քեզ մի կարևոր, շա՛տ կարևոր բան ասել, բայց դեռ մտածում է՝ ասե՞լ, թե՞ չասել . . .